

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանքների լուծման համար տրվում է **75** րոպե

3-4-րդ դասարաններ

- Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 110 միավոր:
- Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին և կազմակերպիչներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքները ինքնուրույն և ազնիվ կատարելն է:

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Ո՞ր տառով է ավարտվում առաջին բառը և սկսվում երկրորդը. միր☼ – ☼իրք:

Ա. ք Բ. ձ Գ. դ Դ. գ Ե. հ

2. Հովհաննես Թումանյանի բանաստեղծության մեջ ո՞ր միջատն էր «դպրոց բացել մեծ ծառի տակ»:

Ա. թուրթակը Բ. բզեզը Գ. մուկը Դ. ճնճղուկը Ե. նապաստակը

3. Ո՞ր տառն է թաքնվել ստվերանշված վանդակում:

		Բ		
		ա		
		Բ		
ա	ր		ա	ն
		ի		
		կ		

Ա. ձ Բ. ք Գ. դ Դ. ց Ե. ս

4. Արմինեն ունի երեք քույր և եղբայր: Քանի՞ քույր ունի Արմինեի եղբայրը:

Ա. մեկ Բ. երկու Գ. երեք Դ. չորս Ե. հինգ

5. Շատ համեղ միրգ եմ, հինգ տառ ունեմ ես,
Կդառնամ թռչուն՝ երկուսը հանես: (հանելուկ)

Ա. խնձոր Բ. խաղող Գ. ծիրան Դ. սալոր Ե. կեռաս

6. Ո՞ր բառի առաջին տառը հանելու դեպքում նոր բառ չի ստացվի:

Ա. մարտ Բ. հորդ Գ. ավազ Դ. հորթ Ե. ասեղ

7. Նշված բառերից որո՞ւմ **իկ**-ը փոքրացուցիչ-փաղաքշական իմաստ չի արտահայտում:

Ա. փիսիկ Բ. բադիկ Գ. կապիկ Դ. մկնիկ Ե. շնիկ

8. Ո՞ր բառին ավելացնենք «գ», որ դառնա բնակավայր, «շ», որ դառնա տատիկի ձեռքի գործիք, «ճ», որ դառնա ծառի մաս:

Ա. ավան Բ. յուղ Գ. շերեփ Դ. մածուն Ե. ոստ

9. Ո՞ր բառն է «ավելորդ»:


Ա. տաբատ Բ. քաղաք Գ. կատակ Դ. պարապ Ե. կարաս

10. Ո՞ր տարբերակի տառերի տեղերը փոխելու դեպքում կստացվի կենդանու փաղաքշական անվանում:

Ա. կիփսի Բ. կնդեի Գ. բոխաչ Դ. գաճրա Ե. գոին

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Ի՞նչ բառ է պատկերված նկարելուկով:



Ա. բալենի Բ. բարեկամ Գ. բարևել Դ. բանալի Ե. բաժակ

12. Ի՞նչ պետք է գրել մեղվիկի փոխարեն:

ձի - երամակ

ոչխար - հոտ

ձուկ -

Ա. պարս Բ. բոլուկ Գ. վտառ Դ. երամ Ե. նախիր

13. Ժամանակով Կատուն ճոն էր,
Շունն էլ գրլիսին զրդակ չունեք,
Միայն, գիտեմ ոչ որդիանց որդի,
Ճանկել էր մի գառան մորթի:

Ի՞նչ մասնագիտություն ունեք կատուն Հովհաննես Թումանյանի «Շունն ու կատուն» բանաստեղծության մեջ:

Ա. հյուսն Բ. բժիշկ Գ. կոշկակար Դ. դերձակ Ե. վարսավիր

14. Ի՞նչ թիվ պետք է գրել մեղվիկի փոխարեն:

աթոռ - 5

պահարան - 8

կահկարասի -

Ա. 13 Բ. 12 Գ. 11 Դ. 10 Ե. 9

15. Ի՞նչ նախադասություն է գաղտնագրված. **այբբեայբայբեինի:**

Ա. Այբբենարանը սիրելի գիրք է: Բ. Արարատը սար է: Գ. Արա, արի:

Դ. Արբանյակը պտտվում է: Ե. Արամայիսը գնաց:

16. Կամաց-կամաց ման եմ գալիս,
Անուշ-մեղուշ նազ եմ տալիս,
Տեսքս շքեղ, գեղեցկատես,
Ունեմ անուն՝ գրված է, տե՛ս: (հանելուկ)

Ա. շուն Բ. կատու Գ. այծ Դ. ճնճղուկ Ե. հավ

17. Պատասխաններում բերված բառերն ինչ-որ օրինաչափությամբ կապված են իրար, բացի մեկից: Ո՞ր բառը չի համապատասխանում այդ օրինաչափությանը:

Ա. ուլ Բ. հորթ Գ. քուռակ Դ. գոճի Ե. ոչխար

18. Հայաստանի Հանրապետության ամենաբարձր լեռը Արագածն է, ամենաերկար գետը՝ Ախուրյանը, ամենամեծ լիճը՝ Սևանը: Իսկ Հայաստանի նշված գետերից ո՞րն է ավելի երկար մյուսներից:

Ա. Դեբեդ Բ. Հրազդան Գ. Քասաղ Դ. Աղստև Ե. Ախուրյան

19. Ձկնորսական ցանցը մեկ բառով կլինի՝

Ա. ուռնակ Բ. ուռկան Գ. ցռուկ Դ. խոիկ Ե. ցանցառ

20. Ո՞ր շարքում են բնակիչները դասավորված ճիշտ նույն հաջորդականությամբ, ինչ նրանց հետևյալ ապրելատեղերը՝ *փեթակ, որջ, տուն, ջուր, բույն*:

Ա. մեղու, արջ, մարդ, շուն, ձուկ
Բ. մեղու, արջ, ձուկ, մարդ, շուն
Գ. մեղու, շուն, մարդ, ձուկ, արջ
Դ. մեղու, արջ, մարդ, ձուկ, շուն
Ե. մեղու, արջ, շուն, ձուկ, մարդ

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. Առաջին տողն ունի հետաքրքիր օրինաչափություն: Այն գտնելով՝ կլրացնես երկրորդ տողը:

Վ (ԿԱ) Վ
Ս (. .) Ս

Ա. ԱԳ Բ. ԱԸ Գ. ՊԱ Դ. ԹԱ Ե. ԵԸ

22. Ո՞ր բառն է *մեծ, խոշոր, հսկա, խոժոռ, վիթխարի* բառերի շարքից «հեռանալու»:

Ա. մեծ Բ. խոշոր Գ. հսկա Դ. խոժոռ Ե. վիթխարի


23. Կանաչ կոշիկ հագել է,
Դեղին գոտիկ կապել է,
Առվի ափին պառկել է: (ժողովրդական հանելուկ)

Ա. գազար Բ. ձմերուկ Գ. դդում Դ. շաղգամ Ե. բոդկ

24. Ո՞ր բառն է հետևյալ շարքում «ավելորդ»:

Ա. հնչյուն Բ. փայլուն Գ. ծաղկուն Դ. ցայտուն Ե. կանգուն

25. Ի՞նչ տառակապակցություն պետք է գրել մեղվիկի փոխարեն:



Ա. ԿԱ Բ. ՂԶ Գ. ԶԱ Դ. ՀԶ Ե. ԿԶ

26. Ի՞նչ մայր է, որ իր ձագերի կաթով է սնվում: (ժողովրդական հանելուկ)

Ա. ծիտը Բ. կենգուրուն Գ. ամպը Դ. ծովը Ե. դելֆինը

27. Աջ կողմում բերված է տառաթվային ծածկագիր, որում յուրաքանչյուր տառին համապատասխանում է մեկ թվանշան: Նույն տառերին համապատասխանում են նույն թվանշանները: Բերված տարբերակներից ո՞րն է համապատասխանում այդ տառաթվային ծածկագրին:

ԱՅԲ
+
ԲԵՆ
ԳԻՐՔ

Ա.	259	Բ.	169	Գ.	258	Դ.	357	Ե.	358
	+		+		+		+		+
	<u>259</u>		<u>960</u>		<u>836</u>		<u>916</u>		<u>845</u>
	518		1129		1094		1273		1203

28. Հետևյալ հինգ բառերից որո՞նք կարող են գործածվել *սև* բառի հետ:

1. արջ 2. ագռավ 3. դեղձանիկ 4. ծիծեռնակ 5. ճայ

Ա. 1, 2 Բ. 1, 2, 4, 5 Գ. 1, 2, 3 Դ. 3, 4 Ե. բոլորը